ԼԻԼԻԹ ՔՈՍՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Բանալի բառեր *– Իզմիրլյան, Աբդուլ Համիդ II, Արևմտյան Հայաստան, եկեղեցի, կրոնափոխություն, քահանա*

XIX դարում ևս օսմանյան իշխանությունը շարունակում էր Օսմանյան կայսրությունում իրականացնել ոչ մուսուլմանների նկատմամբ որդեգրած քաղաքականության հիմնական դրույթները, այն է՝ հարկային և ֆինանսական քաղաքականության միջոցով ստիպել նրանց ընդունել իսլամը, իսկ շատ հաճախ նաև մահվան սպառնալիքով կրոնափոխ լինել[1]: Թեև այդ ժամանակաշրջանում կայսրությունում իբրև թե բարեփոխումներ էին իրականացվում, որոնց հիմնական նպատակներից մեկը հպատակների վիճակի բարելավումն էր և ոչ մուսուլմանների ու մուսուլմանների հավասարության հաստատումը, այնուամենայնիվ անգամ բարեփոխումներ նախաձեռնողներից ոչ մեկը չհրաժարվեց քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ որդեգրած քաղաքականությունից: Նույնիսկ Միդհատ փաշան քննադատում էր նախորդ կառավարողներին թույլ տված այն սխալի համար, որ նրանք չէին ստիպել իրենց «հպատակներին… ընդունել իսլամ: Այդ պետք է սկսել»[2]:

Այս ամենն ավելի բուռն ծավալվեց Աբդուլ Համիդ II-ի կառավարման տարիներին, երբ Հայկական հարցի ծավալման դեմ նրա որդեգրած պանիսլամիզմի գաղափարախոսությունում առանցքային էին կոտորածներն ու բռնի իսլամացումը: Նրա հրամանով անհրաժեշտ էր Արևմտյան Հայաստանում ամրապնդել մուսուլմանական կրոնի դիրքերը, որի առաջնային պայմանը բռնի կրոնափոխությունն էր[3]: Սուլթանը գտնում էր, որ իր գահի անսասանությունը կապահովվի միայն կայսրության իսլամացմամբ[4]: Ուստի օսմանյան կառավարությունը հայկական կոտորածներին զուգահեռ գործի

---

[1] Տե՛ս **Ինճիկյան Հ.**, Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984, էջ 58:

[2] **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, էջ 156:

[3] Տե՛ս **Կիրակոսյան Ջ.**, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.), գիրք առաջին, Երևան, 1982, էջ 19:

[4] Տե՛ս **Պողոսյան Ս.**, Գոյատևման պայքարի քառուղիներում (փաստեր, վկայություններ և մեկնաբանություններ), Երևան, 1988, էջ 16:

դրեց նաև իսլամ պարտադրելու մեթոդները՝ թե՛ մահվան սպառնալիքով և թե՛ «ինքնակամ»:

Օսմանյան կառավարությունը կոտորածներին կրոնական բնույթ հաղորդելու համար դրանցից առաջ իր գործակալների միջոցով առաջարկում է հայերին ընդունել իսլամը: «Անոնք որ չընդունեցին, անխիղճ կերպով կոտորուեցան, իսկ անոնք, որ ընդունեցին ավելի մեծ խնամքի ու հոգատարության արժանացան քան նույնիսկ բուն իսլամացիները»[1]:

Ապա ստեղծվում էին այնպիսի պայմաններ, որ ջարդերից փրկված հայերի մի մասը մահվան ճիրաններից փրկվելու միակ ելքը համարում էր կրոնափոխությունը: Այդ իսկ պատճառով այդ տարիներին արձանագրվել են հայերի կողմից «ինքնակամ» իսլամն ընդունելուն առնչվող բազմաթիվ նամակ-խնդրագրեր: Անգամ չսպասելով նույնիսկ դրանց դրական պատասխանին՝ նրանք իրենց թլպատում էին: Օրինակ՝ հենց Խարբերդի Փերի գյուղում 1895 թ. նոյեմբերի 12-ին մի խումբ հայեր դիմել են այդ քայլին[2]:

Բռնի կրոնափոխության քաղաքականությանը մասնակցում էր օսմանյան ամբողջ հասարակությունը՝ մուսուլման հոգևորականների գլխավորությամբ: Եղել են նաև դեպքեր, երբ կոտորվող հայերը, փախչելու տեղ այլևս չունենալով, մտել են մզկիթ՝ փրկություն խնդրելով, իսկ դրա փոխարեն նրանցից պահանջել են ընդունել իսլամը[3]:

Կրոնափոխության բազմաթիվ դեպքեր գրանցվել են հենց 1894 թ. Սասունի կոտորածների ժամանակ, երբ թուրք զիվորներն աղջիկներ էին առևանգում որպես ռազմավար, ինչից հետո նրանց առաջարկում էին ընդունել իսլամը և ընդգրկվել հարեմներում, իսկ ովքեր հրաժարվում էին կրոնափոխ լինելուց, սպանվում էին[4]:

Կրոնափոխության աշխարհագրական սահմանները հսկայական էին՝ ընդգրկելով Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Խարբերդի գավառների մեծ մասը և մասամբ նաև Հալեպի, Ադանայի և Սեբաստիայի վիլայեթները: Զանգվածային կոտորածներից հետո տվյալ բնակավայրի և շրջակա գյուղերի ողջ մնացած հայությունը որպես կանոն դիմում էր կրոնափոխության: Շատ դեպքերում այդպես էր վարվում նույնիսկ գյուղի ամբողջ բնակչությունը՝ հուսալով այդ կերպ փրկվել մահից ու բազում խոշտանգումներից: Ըստ Յ. Լեփսիուսի՝ ամբողջ Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում բռնի կրոնափոխության էր ենթարկվել 559 գյուղ[5]: 1895 թ. սեպ-

---

[1] «Հայրենիք», 1923, Ա տարի, թիվ 8, էջ 108:

[2] Տե՛ս **Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ.**, Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, Երևան, 2015, էջ 74:

[3] Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна, 2-е, дополненное издание, Ереван, 1982, с. 119.

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 36:

[5] Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1897, отд. II, с. 139.

տեմբերի 30-ին Բաբերդի ջարդերի ընթացքում շրջակա 28 գյուղերում կոտորվել էր շուրջ 400 հոգի, ավերվել և մզկիթի էին վերածվել մի շարք եկեղեցիներ, իսկ ողջ մնացածների մեծ մասը, որոնք հիմնականում կանայք էին, իսլամացվել էր[1]: 1895 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1896 թ. հունվարի 15-ը Խարբերդի նահանգում և նրա շրջակա 59 գյուղերում թուրքերի հետ բռնությամբ ամուսնացել է 1532 կին, իսկ բռնի իսլամացվել՝ 15.179-ը[2]:

1896 թ. դրությամբ Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում շուրջ 40 000 արևմտահայեր բռնությամբ ընդունել են մուսուլմանությունը[3]: Բռնի իսլամացած հայ տղաները, սկսած յոթ տարեկանից, հարկադրված էին կատարել մուսուլմանների բոլոր կրոնական պարտականությունները: Նրանց բոլորին պարտադիր թլպատում էին հինգ դուրուշով: Հայերը կրոնափոխության դիմել էին միմիայն փրկվելու հույսով և կարծում էին, որ կկարողանային այս թոհուբոհից հետո կրկին անցնել իրենց կրոնին: Այդ հույսով նրանք ամեն գնով փորձում էին ինչ-որ կերպ խուսափել մուսուլմանների ծեսերից, բայց թուրքերը, դա շատ լավ հասկանալով, նրանց ստիպում էին դրանք կատարել՝ ասելով. «Դուք մուրթատ էք*, մեր կրօնքը կը ներէ ձեզ սպաննել»[4]: Փայտերով և մահակներով ծեծելով հայերին՝ թուրքերը նրանց տանում էին մզկիթ և պարտադրում կարդալ Ղուրան, կատարել մուսուլմանական բոլոր ծեսերը, իսկ երիտասարդ աղջիկներին ստիպում ամուսնանալ թուրքերի հետ[5]:

1897 թ. լույս տեսած ֆրանսիական արտաքին գործերի նախարարության արխիվի փաստաթղթերն ընդգրկող «Դեղին գրքում»[6] հրատարակված զեկուցագրերում արձանագրվել են մեծաքանակ արժանահավատ և անհերքելի փաստեր, որոնք անվերապահորեն վկայում են, որ կոտորածների ժամանակ Օսմանյան կայսրության տարբեր վիլայեթներում հայերից շատերը կարողացել են փրկվել կրոնափոխության միջոցով: Այդ ամենի մասին պարզորոշ վկայում է 1896 թ. Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնին Անգլիայի դեսպան Ֆիլիպ Կյուրիի հղած նամակը: Հիմնվելով Բիրեջիկում (Հալեպի շրջան) գտնվող անգլիացի դիվանագետ Ֆիցմորիսից ստացած տվյալների վրա՝ նա նշում է, որ տեղի հայերին խմբովի բռնի մուսուլմանացնում են՝ շուրջ 150 հոգու սպանելով, 1500-ի իրենց ազգականների դիերի մոտ ծնկի բերելով՝ բռնի կրոնափոխ են արել, գլուխներին փաթթոց կապել,

---

[1] Մանրամասն տե՛ս «Արարատ», 1896, Բ, էջ 88:

[2] Տե՛ս «Մշակ», 22.02 1896, էջ 3:

[3] Տե՛ս «Արձագանք», 1896, թիվ 34, էջ 1:

* Չար, անխիղճ:

[4] «Հնչակ», 1896, թիվ 8, էջ 61-62:

[5] Տե՛ս «Արձագանք», 1896, թիվ 34, էջ 1:

[6] Այդ մասին տե՛ս **Պողոսյան Վ.**, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), երկրորդ, բարեփոխված և լրացված հրատարակություն, Երևան, 2011, էջ 27-44:

իսկ տեղի եկեղեցին դարձրել մզկիթ: Հայերի 240 տան բնակիչներից ոչ մեկը Բիրեջիկում չի մնացել[1]:

Անգորայում Ֆրանսիայի փոխհյուպատոս Գյուլլիուան նույնպես վկայում է, որ կրոնափոխությունը կատարվել է բռնությամբ: 1895 թ. դեկտեմբերի 18-ին Կամբոնին հղած նամակում նա նշում է. «Մահից խուսափելու համար շատերը համաձայնվել են դիմել կրոնափոխության, իսկ նրանք, ովքեր մերժել են՝ կենդանի նետվել են բոցերի մեջ»[2]:

Բայց եղել են նաև դեպքեր, երբ անգամ կրոնափոխությունը հայերին չի փրկել մահից: Օրինակ՝ Խարբերդի նահանգի Ակն գավառակում, որն ուներ 13 հայկական գյուղեր՝ շուրջ 773 տուն 1500 բնակչով: Իսմայիլ էֆենդին իր զորքով հարձակվում է Վաղշեն գյուղի վրա և այն ավերում, ջարդերից փրկվածներին ստիպում ընդունել մուսուլմանությունը: Կանանց ու երեխաներին հավաքում են մզկիթում, իսկ 37 տղամարդկանց զենքի սպառնալիքով հրապարակավ ընդունել են տալիս իսլամը: Բայց սա նրանց չի փրկում մահից, որովհետև Իսմայիլ էֆենդու զորքն այդ տղամարդկանց հետ ճանապարհ է ընկնում Ակն՝ իբրև թե նրանց պաշտոնապես թլպատելու համար, սակայն ճանպարհին նրանց սպանում են:

Նույնը կատարվում է նաև Վանք, Կռանի, Հացկնե, Խոռոջ և Էհնեկիք գյուղերում: Թուրքերը մեծաքանակ զորքով հարձակվում են այդ գյուղերի վրա և ութ օր շարունակ դրանք ավերում, ապա պահանջում են և ստիպում բոլորին կրոնափոխ լինել, իսկ ով փորձում է հրաժարվել, տեղում սպանվում է, ինչպես ոմն Մարտիրոս Թուլումպճյանը, որը չի ընդունել մուսուլմանությունը և սպանվել է կացնի հարվածներով: Այս ամենը կրկնվում է բոլոր 13 գյուղերում, որտեղ ողջ մնացածները կրոնափոխ են արվել[3]:

Միայն Վանի վիլայեթում 245 գյուղի հայերի բռնի իսլամացրել են, իսկ 116 եկեղեցի վերածել մզկիթի[4]: Վանի Հայոց Զորի գավառում 1896 թ. հունվարի դրությամբ բռնի կրոնափոխվածների թիվը հասնում էր մոտ 500 ընտանիքի՝ շուրջ 5600 մարդկանցով[5]: Իսկ Վանի վիլայեթում կրոնափոխվել են 30.000 անձինք, ովքեր, ի նշան կրոնափոխության, գլուխները փաթաթում էին սպիտակ գլխաշորով: Սակայն նրանք, ովքեր թուրք բաշիբոզուկներին հավատ չէին ներշնչում, ևս սպանվում էին[6]:

Վանի և Բիթլիսի վիլայեթների կրոնափոխվածների մասին տեղեկություն է հաղորդում Աղթամարի Խաչատուր Բ. կաթողիկոսը՝ պատրիարք

---

[1] Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1896, թիվ 11, էջ 176: Տե՛ս նաև **Աճառյան Հ.**, Տաճկահայոց հարցի պատմութիւն (սկզբից մինչև 1915 թ.), Նոր-Նախիջևան, 1915, էջ 32, **Պողոսյան Վ.**, նշվ. աշխ., էջ 37:

[2] Տե՛ս **Պողոսյան Վ.**, նշվ. աշխ., էջ 37-38:

[3] Տե՛ս «Արարատ», 1896, թիվ Է, էջ 329-333:

[4] Տե՛ս Братская помощь пострадавшим в Турции армянам, с. 138:

[5] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 5, գ. 4, թ. 2:

[6] Տե՛ս «Արարատ», 1896, ԺԲ, էջ 585:

Մատթեոս Իզմիրլյանին հղած զեկուցագրում: Նկարագրելով 1895 թ. այդ վիլայեթներում տեղի ունեցած սոսկալի կոտորածները՝ նա հայտնում է, որ գրեթե բոլոր գյուղերում մահվան ճիրաններից փրկվելու համար մեծ քանակությամբ հայեր (ցավոք, փաստաթղթում թվական տվյալներ չի նշվում) դիմել են կրոնափոխության, իսկ եկեղեցիները վերածվել են մզկիթների[1]:

Համիդյան կոտորածների բուռն ալիքից հետո բռնի իսլամացած հայերից շատերը փորձեցին վերադառնալ իրենց կրոնին: Քրիստոնյաների այդ ետդարձի գործընթացը մեղմացավ Արևելյան պատերազմից հետո, արտաքին միջամտության շնորհիվ իսլմացած հայերի նկատմամբ արձանագրվեցին որոշ փոփոխություններ: Արդյունքում 1856 թ. Օսմանյան կայսրությունում արգելվեց իսլամից հրաժարվելու և այլ կրոն ընդունելու համար սահմանված մահապատիժը[2]: Այնուհետև այս գործընթացն ավելի մեղմացվեց 1895 թ. ապրիլին բրիտանական կառավարության մշակած բարեփոխումների մի ծրագրում, որտեղ նշվում է հայերի կրոնափոխության ազատ իրավունքի մասին[3]: Բարեփոխման այս կետը վերաբերում է 1894 թ. Սասունի կոտորածների ժամանակ բռնի կրոնափոխված հայերին: Ազգային այս մեծ տագնապի օրերին Կ. Պոլսի հայոց պատրիարք Իզմիրլյանը դիմում է վեհափառ Կաթողիկոսին՝ հրահանգ խնդրելով, թե ինչպես վարվի կրկին Հայ եկեղեցի դիմողներին: Կաթողիկոսը հրահանգում է ընդունել մուսուլմանացած հայերին առանց եկեղեցական ապաշխարանքի. բավական է, որ նրանք իրենց կամքը հայտնեն: «Բայց դարձը դժուարացած է մահմեդականների ֆանատիկոսութեամբ. Դոքա խիստ հսկողութիւն են անում այդ երէկւայ հայերի վրայ, թլպատում են այժմ թէ մեծին թէ փոքրին ու ստիպում կատարել մահմդական բոլոր ծէսերը»[4]:

Կոտործներից հետո օտարերկրյա դիվանագետների ճնշմամբ իշխանությունը թույլատրեց հայերին վերընդունել քրիստոնեությունը: Մեծ թվով հայեր ցանկություն հայտնեցին վերադառնալ իրենց կրոնին, բայց վախի մթնոլորտը այնուամենայնիվ թուլ չէր տալիս դա անել բացահայտորեն, քանի որ նրանց անցած ուղին ստիպում էր չվստահել Օսմանյան կայսրության ոչ մի «թույլատրության»: Ուստի շատերը բացահայտորեն չդիմեցին այդ քայլին, որովհետև իրոք նրանց հետապնդում էին հասարակական ճնշումները, մահվան սպառնալիքները, և այդ իսկ պատճառով նրանք մնացին ծպտյալ հայեր:

Համիդյան զանգվածային կոտորածների տարիներին ընդհանուր առմամբ բռնի կրոնափոխության են ենթարկվել շուրջ 200.000 հայեր[5]: Նույնը

---

[1] ՀԱԱ, ֆ. 450, ց. 5, գ. 88, թ. 1-10:

[2] Տե՛ս **Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ.**, նշվ. աշխ., էջ 67:

[3] Տե՛ս **Կիրակոսյան Ա.**, Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 2007, էջ 4:

[4] «Մուրճ», 1896, թիվ 3-4, էջ 473:

[5] **Կիրակոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 11-12:

վկայում է ֆրանսացի պատմաբան Ժակ Մորգանը, ըստ որի՝ 100.000 հայեր մուսուլմանացվել են, իսկ 100.000 աղջիկներ և կանայք տարվել էին հարեմներ, այսինքն՝ նրանք ևս մուսուլմանացվել են[1]: Իսլամացման քաղաքականությունն ավելի բիրտ ձևով շարունակվեց Հայոց ցեղասպանության տարիներին:

Լիլիթ Քոսյան – ***Հայերի կրոնափոխությունն Օսմանյան կայսրությունում 1890-ական թվականներին***

Աբդուլ Համիդ II-ի կառավարման տարիներին պանիսլամիզմի գաղափարախոսությունում առանցքային էին կոտորածներն ու բռնի իսլամացումը: Սուլթանը գտնում էր, որ իր գահի անսասանությունը կապահովի միայն կայսրության իսլամացումը, ուստի հայկական կոտորածներին զուգահեռ նա գործի դրեց իսլամ պարտադրելու մեթոդները: Հայերը մահվան ճիրաններից փրկվելու միակ ելքը տեսնում էին ի դեմս կրոնափոխության: 1890-ական թվականների զանգվածային կոտորածներից հետո շատ դեպքերում բնակավայրի և շրջակա գյուղերի ողջ մնացած հայությունը դիմում է կրոնափոխության՝ հուսալով այդ կերպ փրկվել մահից: Բռնությամբ իսլամացած հայերից շատերը փորձեցին նաև վերադառնալ իրենց կրոնին: Թեև կոտորածներից հետո օտարերկրյա դիվանագետների ճնշմամբ իշխանությունը թույլատրեց հայերին վերընդունել քրիստոնեությունը, բայց վախի մթնոլորտն այնուամենայնիվ թուլ չէր տալիս դա անել բացահայտ, քանզի նրանց անցյալը ստիպում էր չվստահել Օսմանյան կայսրության և ոչ մի «թույլատրության»: Ուստի շատերը բացահայտորեն չդիմեցին այդ քայլին, որովհետև նրանց հետապնդում էին հասարակական ճնշումները, մահվան սպառնալիքները, և այդ պատճառով նրանք դարձան ծպտյալ հայեր:

Лилит Косян – ***Вероотступничество армян в Османской империи в 1890-е годы***

Ключевые слова – *армяне, массовая резня, христианство, зарубежные дипломаты, исламизация, Османская империя, ислам, султан, вероотступничество, угрозы смерти*

В годы правления Абдул Гамида II стержневыми моментами в панисламистской идеологии были резня и насильственная исламизация. Султан считал, что незыблемость его власти обеспечит лишь исламизация империи, и потому параллельно с резней армян он применял методы по принуждению к исламу. В вероотступничестве армяне видели единственный выход спасения от когтей смерти. Во многих случаях армяне, выжившие после массовой резни 1890-х годов, прибегали к вероотступничеству, надеясь таким образом спастись от гибели. Многие из насильственно исламизированных армян попытались вернуться к своей вере. Несмотря на то, что после резни армян власти под давлением зарубежных дипломатов разрешили армянам принимать христианство, тем не менее, атмосфера страха не позволяла делать это в открытую, так как прошлое вынуждало не доверять Османской империи и ее «разрешениям». И потому многие армяне не шли в открытую на этот шаг, так как их преследовало общественное давление, угрозы смерти, и в результате они стали криптоармянами.

---

[1] Տե՛ս **Կիրակոսյան Զ.**, նշվ. աշխ., էջ 56:

Lilit Qosyan – *The Religious Conversion of Armenians in the Ottoman Empire in the 1890s*

Key Words *– Armenian massacres, Armenians, Ottoman Empire, sultan, religion, Islam, ideology, foreign diplomats, conversion, Christianity*

During the reign of Abdul Hamid II, massacres and forced Islamization were central to the ideology of pan-Islamism. The Sultan believed that the steadfastness of his throne would only be ensured by the Islamization of the empire, so in parallel with the Armenian massacres, he used the methods of forcing Islam. Armenians saw the only way out of the clutches of death in the form of religious conversion. After the massacres of the 1890s, in many cases, Armenians living in the surrounding villages resorted to conversion, hoping to escape death. Meanwhile many forcibly converted Armenians tried to reconvert to their religion. Despite the fact that after the massacres under the pressure from foreign diplomats the authorities allowed Armenians to reconvert to Christianity, the atmosphere of fear did not allow them to do so openly, as the lessons of past made them distrust any "permission" of the Ottoman Empire. Therefore, many did not openly take this step, because they were under public pressure and death threats. As a result, they became hidden Armenians.

Ներկայացվել է 17.02.2021
Գրախոսվել է 10.03.2021
Ընդունվել է տպագրության 14.04.2021